ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

---

## ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 21 հոկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով Ելենա Կալյակինայի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

**1.** Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Ելենա Կալյակինան 2016թ. հոկտեմբերի 3-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 61, 63-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 5-րդ մասի՝ վճռաբեկ բողոքին կցվում է նաև վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը), դրույթը»:

Դիմողը ներկայացրել է նաև միջնորդություն՝ իրեն պետական տուրքի վճարումից ազատելու մասին:

Դիմողը նշում է, որ Սահմանադրությամբ երաշխավորված և խտրականությունն արգելող հանգամանք է անձին վերապահված՝ դատական պաշտպանությունն անձամբ իրականացնելու իրավունքը:

Ըստ դիմողի՝ իրավակարգավորման տարբերակված եղանակ է այն փաստը, որ վճռաբեկ դատարանն իր 17.07.2016թ.՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերադարձրել է բողոքն այն պատճառաբանությամբ, որ բողոքին կցված չէ բողոքի էլեկտրոնային տարբերակը:

Դիմողը նաև նշում է, որ իր կողմից կատարված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի պետը հայտնել է, որ ՀՀ կառավարության N 1543-Ն որոշման 8-րդ գլխի 153-րդ կետի 3-րդ և 10-րդ ենթակետերի համաձայն՝ կալանավորված անձանց և դատապարտյալներին արգելվում են ցանկացած տեսակի հեռահաղորդակցության կապի միջոց (բջջային հեռախոս, ռացիա և այլն), ֆոտոխցիկ, համակարգիչ, տեսախցիկ, վիդեո, աուդիո ձայնագրող սարքեր և նկարահանող այլ տեխնիկա և այլն, ինչն էլ ակնհայտ է դարձնում խտրականության և վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող իրավակարգավորմամբ նախատեսված պահանջը ողջամիտ չէ, և վճռաբեկ դատարան անձամբ դիմելու իրավունքը, հետևաբար, նաև ինքնաարտահայտման, ինքնադրսևորման իրավունքը դարձնում է տեսական, ձևական, վերացական և պատրանքային:

**2**. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ գործի քննության ընդունումը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

***ա/*** գործի դատավարական նախապատմությունը, մասնավորապես, դիմումին կից ներկայացված ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների ուսումնասիրությունը վկայում է, որ վճռաբեկ դատարանը 2016 թվականի հուլիսի 17-ի որոշմամբ վերադարձրել է դիմողի վճռաբեկ բողոքն այն պատճառաբանությամբ, որ, ի թիվս այլնի, «...ներկայացված վճռաբեկ բողոքի ուսումնասիրությունից երևում է, որ դրան էլետրոնային տարբերակը /էլեկտրոնային կրիչը/ կցված չէ»: ՀՀ վճռաբեկ դատարա-

նը 2016 թվականի սեպտեմբերի 9-ի որոշմամբ մերժել է վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելն այն պատճառաբանությամբ, որ «...բողոքաբերի կողմից չի հիմնավորվել, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»: Այսինքն, դիմողը երկրորդ անգամ վճռաբեկ դատարան դիմելիս արդեն իսկ վերացրել էր վճռաբեկ դիմումին էլեկտրոնային կրիչը կցված չլինելու վերաբերյալ վճռաբեկ դատարանի մատնանշած թերությունը, այլապես, վճռաբեկ դատարանը, ըստ էության, կկայացներ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում: Հետևաբար, դիմողի փաստարկներն առ այն, որ «...վիճարկվող իրավակարգավորումը ողջամիտ չէ և սահմանափակում է վճռաբեկ դատարան դիմելու իրավունքը...»՝ ակնհայտ անհիմն են, քանի որ բացակայում է դիմողի կողմից վիճարկվող դրույթի և դիմողի իրավունքների ենթադրյալ խախտման միջև պատճառահետևանքային կապը, պահանջ, որը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի և ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է,

բ/ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը նաև արձանագրում է, որ խնդրո առարկա դրույթում բարձրացված հարցի վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի 2015թ. մարտի 17-ի ՍԴՈ-1196 որոշումը, որով սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ նախադասությունում ամրագրված դրույթը՝ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1192 որոշման մեջ նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակում:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

## Ո Ր Ո Շ Ե Ց.

Ելենա Կալյակինայի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

21 հոկտեմբերի 2016 թվականի
ê ¸ ¸ Î à/2-29